ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2017թ. հոկտեմբերի 23 N 137-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 17 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԲԱԶՄԱՂԲՅՈՒՐԻ Ն.ՍԱՖԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի <<դ>> ենթակետով և 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 801-Ն որոշման 2-րդ կետը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 14-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների, որպես պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին>> N 17 որոշմամբ հաստատված <<Բազմաղբյուրի Ն. Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Բազմաղբյուրի Ն. Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում իրականացնել նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության պետական գրանցումը:
3. Սույն որոշման պահանջների կատարման ապահովումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մամիկոն Աբգարյանին:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ